

6 ¹Տեսիլ սրբոյն Սահակայ Պարթևի, զոր ետես ի Վաղարշապատ քաղաքի, յորժամ նստեր ի սուրբ եկեղեցւոջն ի վերայ բեմին մերձ ի սեղանն Աստուծոյ ի սուրբ կաթողիկէին: 7 Արդ՝ գրեսցուք զտեսիլն, որ են բանք Յար եւ Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ եւ Հոգւոյն սրբոյ:

8 «Եւ անհա յանկարծակի բացաւ հաստատութիւնն երկնից², ընդ որ ծագեաց³ լոյսն սաստիկ եւ ելից զամենայն երկիր: 9 Եւ կանգնեալ երեւեցաւ ինձ յերկրի բեմբ⁴ չորեքկուսի ամպեղէն, որոյ բարձրութիւնն հասաներ մինչեւ յերկինս, եւ լայնութիւնն տարածեալ լսոյր զամենայն երկիր: 10 Եւ ի վերայ բեմբին երեւեր տետրասկեղ⁵ յոսկւոյ սրբոյ՝ խորանարդ, ըստ արժանի սպասաւորութեան Տեառն, ծածկեալ յոյժ բարակ կտաւով սպիտակափայլ գունով: 11 Եւ ի վերայ խորանածեւ ծածկութեանն⁶ յայտնապէս նշան տերունական խաչին երեւեր, որոյ երեւելութիւնն ոչ նիւթեղէն, այլ լուսեղէն ցուցանիր: 12 Եւ յանկարծակի եղեւ շնչին խաղաղասիգ⁷ աւոյոյ, եւ բացաւ փեղկ մի ծածկութի⁸ կտաւոյն. ընդ որ հայեցեալ տեսի, եւ անհա կայր ի վերայ բեմբին սեղան չորեքկուսի ականակապ, ի բազմագունի ականց պատուականաց⁹ ընդելուզեալ: 13 Եւ ի վերայ սեղանոյն կայր հաց մի սուրբ եւ ողկոյզ մի խաղողոյ¹⁰, ըստ պատուականութեան¹¹ խորհրդոյ երկնաւոր փրկութեան: 14 Եւ մերձ ի սուրբ¹² խորհուրդն երեւեր ծառ մի ձիթենի վարսաւոր, պտղալից յոյժ, զորոյ ոչ կարէի ամնուլ զչափ բարձրութեանն եւ զլայնութեանն¹³. որոյ բերն էր բազմապտուղ եւ ատոք, եւ տեսիլն եւ գեղեցկութիւն՝ անպատում եւ սքանչելի: 15 Եւ որոշեալ¹⁴ չորք ոստք ¹⁵ձիթենւոյն՝ ի խոնարհ կողմ երկրի ձկտեալ մաւտէին. որոց երեք ոստք միաչափք եւ հասարակապտուղք երեւէին, եւ չորրորդն ի նոցանէ որպէս կիսաբաժին եւ նուազապտուղ¹⁶ ըստ երկայնաչափութեան երիցն երեւէին: 16 Եւ պտուղք¹⁷ չորեցունց

1 ԲԳտ. չունին այս վերնագիրը

2 ԲԳտ. հաստատութիւնն վերին

3 ԲԳտ. ծագեալ

4 ԲԳտ. այստեղ եւ յետոյ՝ միշտ բեմ, բեմի...

5 Ատ. այստեղ՝ տետրակ սկեղ

6 Ձ. ծածկութեն (վրան պատիւ). գուցէ՝ ծածկութին

7 Ձ. խաղաղասիք

8 Ձ. ծածկութե (պատուով)

9 ՁԱտ. չիք պատուականաց

10 Ձ. խաղող

11 ԲԳտ. ըստ պատուական

12 ԲԳտ. առ սուրբ

13 ՏՏ. լայնութեանն

14 Ձ. որոշել

15 ՁԱտ. միաչափ ձիթենւոյն... ձգեալ

16 Ձ. նուազապտուղ

17 Ձ. պտուղ